

Հ Ո Դ Վ Ա Մ Ն Ե Ր

Մ. ԳՈՐԿՈՒ ԼԵՆԻՆՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ
ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ձ. Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լենինը Գորկու, որպես գրողի և հասարակական գործչի քայլերին և ճակատագրին հետևում էր նրա գրական ասպարեզ իջնելու առաջին տարիներից։ Այն ժամանակ էլ Լենինը նկատել էր Գորկու անխզելի կապը Ռուսաստանի հեղափոխական շարժման հետ։ 1901 թվականին «Խսկրայի» էջերում խոսելով բանվորական ցույցերի վերելքի մասին, Լենինն օրինակ էր բերում այն ցույցը, որ տեղի էր ունեցել Նիժնի-Նովոգորոդում, Գորկուն ճանապարհելու ժամանակ։ Նա «Իրավացի» էր գտնում այդ ցույցի հոնտորի խոսքը, որը «բոլոր ուսմարդկանց անունից, որոնց մեջ գեթ մի կաթիլ ձգտում կա դեպի չուլսն ու ազատությունը», ծաղրել էր բուրժուական հրապարակախոսության «ամեղադրանքներն» այն մասին, որ Գորկին վատ ազդեցություն ունի բանվորների վրա։ Լենինն ուրախությամբ մեջ էր բերում հոնտորի խոսքերը. «Խսկ մենք հայտարարում ենք, որ այդ լավ ազդեցություն էր»¹։

Գորկու «լավ ազդեցությունը» Ռուսաստանի հեղափոխական շարժման վրա շարունակ ընդգծում էր ինքը Լենինը, խրախուսելով Գորկու գործունեությունը գեղարվեստական գրականության ասպարեզում, պաշտպանելով նրան բուրժուական գրականագետների և հրապարակախոսների հարձակումներից, միշտ առանձին սիրով և ներողամտությամբ, բայց շիտակորեն, սկզբունքային դիրքերից ուղղելով նրա սխալները։ Գորկու և Լենինի մոտիկ ծանոթությունն սկսվել է բոլշևիկյան առաջին լեգալ թերթի՝ «Նովայա ժիզնի» խմբագրությունում համատեղ աշխատանքի ժամանակներից (1905 թ. նոյեմբեր)։ Այդ թերթում Գորկին հանդես եկավ «Նոթեր քաղաքներիության մասին» ակնարկով, որն արժանացավ Լենինի խրախուսանքին։ Ռեակցիայի տարիներին մեկնելով արտասահման և ժնկում հիմնելով «Պրոլետարի» թերթը, Լենինը հրավիրում էր Գորկուն աշխատակցելու այդ թերթին և խնդրում գրել այդ ակնարկի ոգով, ինչպես նաև գեղարվեստական հատվածներ։ Նույն տարիների մի շարք նամակներում Լենինը կրկին անդրադառնալով Գորկու աշխատակցությանը բոլշևիկյան թերթերին, շարունակ հիշեցնում է գեղարվեստական մեծ գործից չկտրվելու պայմանը։ «Ինձ շատ և շատ է ուրախացնում «Пролетарий»-ի համար փոքրիկ բաներ գրելու Ձեր պլանը... Բայց եթե մեծ

1 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հ. 5, էջ 425—426։

աշխատանք կա, իհարկե, մի կտրվեք²։ Առանձին ուրախությամբ լենինը ողջունեց Գորկու «Հեքիաթներին» հրապարակումը բոլշևիկյան «Զվեզդա» թերթում (1912 թ.)։ Դրանից երկու տարի առաջ նա լուրջ կշտամբանքներ էր ուղղել Գորկուն այն բանի համար, որ նա իր աշխատակցությունն էր խոստացել Ամֆիտեատրովի «Սովրեմեննիկ» ամսագրին, որն առաջադիմական ուղղության շունքն էր³։ Դրա համակենտրոնացնել գեղարվեստական գրականության լավագույն ուժերը... — գրում էր լենինը։ ...Շատ վատ է դուրս դալիս։ Տրամադրությունս տխուր է⁴։ Այժմ, «Զվեզդայի» էշերում կարդալով Գորկու «Հեքիաթները», — դրանցից ստացած տպավորությունը նա համեմատում էր Ամֆիտեատրովի ամսագրում Գորկու մասնակցության պատճառած «տրտմության» հետ. «Հոյակապ «Հեքիաթներով» Դուք շատ և շատ օգնեցիք «Звезда»-ին և այդ ինձ չափազանց ուրախացրեց, այնպես որ ուրախությունը — եթե խոսենք ուղղակի — գերազանցեց Չեռնովների և Ամֆիտեատրովների հետ Ձեր ունեցած «ռոմանի» պատճառած տրտմությանը...»⁵։

Գորկու, որպես բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի և բոլշևիզմի հետ կապված գրողի նշանակությունը լենինն ընդգծում էր նույնիսկ այն ժամանակ, երբ Գորկին լուրջ շեղումներ էր թույլ տալիս բոլշևիկյան գծից։ «Հրապարակախոսի նոթեր» հոդվածում (1910 թ.) խստորեն քննադատելով «վախրյոդականների» «պլատֆորմը», լենինն այսպիսի վերապահում էր անում.

«Սակայն անկարելի կլիներ ասել, թե ամբողջապես բացասական է այն ռեալ բովանդակությունը, որ ունեն Պլատֆորմի՝ մեշ բերված բառերը։ Նրանց հետև թաքնված է որոշ ռեալ բովանդակություն։ Այդ դրական բովանդակությունը կարելի է արտահայտել մի բառով՝ Մ. Գորկի...»

Իսկ Գորկին անպայման խոշորագույն ներկայացուցիչն է պրոլետարական արվեստի, նրա համար շատ բան է արել և էլ ավելի շատ կարող է անել։ Սոցիալ-դեմոկրատիայի յուրաքանչյուր ֆրակցիա օրինապես կարող է պարծենալ Գորկու իր թեկն պաականելով...»։ «Պրոլետարական արվեստի գործում Մ. Գորկին հսկայական ձյուն է, շնայած նրա համակրանքին դեպի մասխիզմն ու օտոզովիզմը», — եզրափակում է իր խոսքը Վ. Ի. լենինը⁶։

Պարծենալով Գորկիով և բարձր գնահատելով նրա ստեղծագործությունը, լենինը, սակայն, հեռու էր անքննադատ վերաբերմունքից դեպի նրա ոչ միայն գաղափարական վրիպումները, այլև գեղարվեստական թերությունները։ Այս գիծը երևում է «Մայրը» վեպի մասին լենինի գնահատականից։ Գորկին պատմում է, թե ինչպես լոնդոնյան համագումարում (1907 թ.) ինքը նախ տեսնում է Պլեխանովին, որն ասում է նրան միայն մի խոսք՝ «Ծն ձեր տաղանդի երկըրպադուն հմ», մինչդեռ լենինը մոտենալով գրողին, «մի ձեռքով շփելով սոկրատյան ճակատը», մյուսով սեղմելով նրա ձեռքը և «քնքշորեն փայլեցնելով՝ զարմանալի կենդանի աչքերը», անմիջապես սկսում է խոսել «Մայրը» վեպի թերութունների մասին։ Գորկին ասում է, որ շտապել է։ Սակայն լենինը, թերություններ գտնելով վեպի մեջ, խրախուսում է այդ շտապողականությունը։

² Նույնը, հ. 34, էջ 442։

³ Նույն տեղում, էջ 506։

⁴ Նույնը, հ. 33, էջ 21։

⁵ Նույնը, հ. 16, էջ 268։

Շատ բանվորներ, որ հեղափոխությանը մասնակցում էին տարերայնորեն, անգիտակցաբար, հիմա կկարդան այդ գիրքը իրենց համար մեծ օգուտով: «Շատ ժամանակին գիրք է»: «Դա նրա միակ, բայց ինձ համար ծայր աստիճան թանկ հաճոյախոսությունն էր», — ավելացնում է Գորկին⁶:

Մախիզմի և օտզովիզմի, լիկվիդատորության դեմ պայքարի մեջ լեհիստան ոչ ոքի չխնայեց, այդ թվում և նրանց, որոնք 1905 թ. հեղափոխության ժամանակ հարում էին բոլշևիկյան թեհին և վաստակ ունեին կուսակցական պրոպագանդիստական աշխատանքի մեջ: Կուսակցական շրջաններում, մամուլում, ինչպես նաև իր նամակներում, լեհիստան քննադատեց նաև Գորկուն: Օգտագործելով այս հանգամանքը, բուրժուական մամուլը լուրեր տարածեց, թե իբր Գորկին վտարված է սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից:

Բուրժուական գրողների և գրականագետների թշնամական վերաբերմունքը դեպի Գորկին, նրա՝ սոցիալ-դեմոկրատիայի հետ կապվելու պատճառով, նոր չէր: Հարձակումներն սկսեցին բուռն թափ ընդունել մասնավորապես 1904 թ. Դ. Մերեթկովսկու «Նովի պուտ» ամսագրում, «Ռուսսկի վեստնիկում» և այլ պարբերականներում հանդես էին գալիս լիբերալիզմի և դեկադենտիզմի առավել ընդունակ քննադատներն ու հրապարակախոսները, օրինակ Գ. Չուկովը, Ն. Ստեչկինը, Նիկ. Բերդյաևը և շատ ուրիշներ: Ստեչկինը հանդես եկավ երկար հոդվածաշարով, որի մեջ արտահայտում էր ամենապահպանողական շերտերի հայացքները: Նա Գորկու միայն որոշ պատմվածքների («Չելկաշ», «Մալվա», «Վլայսկա Կրասնի») նկատմամբ վերապահումներ անելով, մնացած բոլոր պատմվածքներն ու արձակ բանաստեղծությունները հայտարարում էր «բոսյակային», իսկ հեղինակին՝ «բոսյակների երգիչ»: Գորկին լույս է վառել, բայց դա ոչ թե այն լույսն է, որ վառվում է ստիրոգ գահի առաջ, և որը պետք է լուսավորի կյանքի անտեսանելի անկյունները, այլ բոսյակի բարձրացրած շահը, որ պետք է կոչվի հեղափոխության շահ: Ստեչկինն իր հոդվածի սկզբում տվյալներ է հաղորդում Գորկու երկերի մասսայականության մասին: Այդ արտակարգ տարածվածությունը նա բացատրում է նրանով, որ Գորկին հատակի մարդուն օժտել է հպարտությամբ, տիրող կարգերի դեմ ոչ միայն բողոքի, այլև դրանք փոխելու կամքով: Անսքող ատելություն կա քննադատի տողերում դեպի այդ հերոսները և նրանց ստեղծողը, որովհետև նրանք ուղում են վեր բարձրանալ հատակից ոչ թե «բարոյական վերածնության» միջոցով, ոչ թե թագավորի և իշխանավորների գթասրտության, այլ նրանց տապալելու, հեղափոխության միջոցով: «Եվ բոսյակը դրսևորում է իշխանության դիմադարձությունը: Այդ կողմից էլ նա գնահատելի է իր ստեղծողի համար»⁷: Մեջ բերելով ամբողջ «Մրրկահավը», Ստեչկինը դա բնորոշում է որպես «փոթորկի և ավերածության հիմն», «բոսյակային անսանձ Մարսելյոզ»:

Քննադատը զայրացած էր, որ ոչ միայն իր ժամանակակիցների, այլև Պուշկինի ու ռուս գրականության մյուս նշանավոր ներկայացուցիչների համեմատությամբ Գորկին ամենատարածված հեղինակն է: «Ինքը, Պուշկինը, փառքի ծաղկման ժամանակ, Պուշկինը մտքերի տիրակալ, չհասավ Գորկու մասսայականությանը խոստովանում է Ստեչկինը⁸: Հինգ տարվա ընթացքում՝ 1898—1903 թվականներին, Գորկու երկերի հինգ հատորները և «Քաղքենի»

⁶ М. Горький, Собр. соч. в тридцати томах, т. 17, стр. 7.

⁷ «Русский вестник», 1904, № 1, стр. 147.

⁸ Նույն տեղում, էջ 135:

ներ» ու «Հատակում» պիեսներն սպառվել էին 416.000 օրինակով: Հասարակ հաշվումներ անելով, որ Գորկու այդ գրքերից յուրաքանչյուրը կարող է՝ գնորդից բացի՝ կարդալ նրա ժանոթն ու ազգականը, գրադարանի ընթերցողը՝ քննադատը ոչ թե գոհունակությամբ, այլ ընթերցողներին ահաբեկելու դիտավորությամբ բացականչում էր. «Գորկուն կարդում էր ամբողջ գրագետ Ռուսաստանը»⁹: Ի միջի այլոց, Գորկին ինքը իր հիշողություններում հետաքրքիր տեղեկություն է հաղորդում «Հատակումի» բեմադրության մասին: Չորս տարվա ընթացքում այդ պիեսը բեմադրվել է Գերմանիայի բոլոր բեմերում, միայն Բեռլինում՝ 500 անգամ¹⁰:

Գեորգի Չուկովը նույնպես մի առանձին շարությամբ էր խոսում այն մասին, որ Գորկուն կարդում են «հարյուր հազարավոր» ընթերցողներ, և նրանց «անմտության» պատճառով Գորկին դարձել է «գրական դիկտատոր»: Չուկովը Գորկուն և նրա ընթերցողներին խոցելու մի տարօրինակ տենդով բռնված, հուշակավոր «Մարդ» նովելը բնորոշում է որպես «ինչ-որ տարօրինակ տիկնիկ»՝ ամարքսիստական բլուզով, որի գրպանից ցցված է նիցշեն պ. Լուսաշարսկու շարագրումով¹¹:

Ոչ միայն Չուկովին, այլև Գորկու մյուս բոլոր հակառակորդներին, ինչքան էլ նրանք իրենց վեր էին հայտարարում քաղաքականությանից ու կուսակցություններից, — ներվայնացնողը ու հիստերիկայի մատնողը Գորկու կապն էր ամարքսիստական բլուզի, սոցիալ-դեմոկրատական կուսակցության հետ: Գորկուն ուղղված իր նամակներից մեկում Գ. Վ. Պլեխանովը, նշելով, որ նրա «Մատվիյ Կոժեմյակինի կյանքը» գրքի նկատմամբ քննադատությունը բարյացակամություն չցուցաբերեց, ավելացնում է. «Բայց չէ որ մեր քննադատությունը չի կարող ներել Ձեզ այն, որ Դուք սոցիալիստ եք»¹²:

Գորկու դեմ հարձակումները շարունակվեցին 1905 թ. հեղափոխության ժամանակ և նրանից հետո, երբ հրապարակ եկան նրա «Մայրը» վեպը և մի քանի դրամատիկական երկեր: Դեկադենտիզմի ճամբարում հայտնվեցին նոր քննադատներ, որոնց բոլորի գլխավոր «հոգսը» դարձյալ այն էր, որ Գորկին կապվել է սոցիալ-դեմոկրատական կուսակցության հետ և դրա հետևանքով, իբր թե դադարել է գրող լինելուց, իր ստեղծագործության մեջ զբաղվում է քաղաքականությամբ:

Դ. Ֆիլոսոֆովը, որ 1905 թ. թույն էր թափում Լենինի վրա՝ գրականության կուսակցականության մասին հողվածի համար, 1907 թ. հանդես եկավ Գորկու դեմ ուղղված հատուկ հողվածով, որի հենց միայն վերնագիրն ապացույց էր այն շարանենգ դատաստանի, որ ճգնում էր իրագործել բուրժուական ռեակցիոն գրաքննադատությունը մեծ գրողի նկատմամբ՝ «Գորկու վախճանը»: Պլեխանովը հատկապես այդ հողվածը նկատի ուներ, երբ գրում էր, թե քննադատությունը չի կարող ներել Գորկուն այն բանի համար, որ նա սոցիալիստ է: Իսկապես, Ֆիլոսոֆովի, ժամանակի նշանավոր էսեռ քննադատի, «անհատի բացարձակ ազատության» կրթոտ պրոպագանդիստի հիշյալ հողվածը հենց այդ խոսքերով էլ սկսվում էր. «Երկու բան կործանեցին գրող Գորկուն՝ հաշողու-

⁹ Նույն տեղում, էջ 134.

¹⁰ М. Горьки й, Собр. соч. в тридцати томах, т. 17, стр. 8.

¹¹ «Новый путь», 1904, № 5, стр. 219.

¹² Г. В. Плеханов, Литература и искусство, М., 1948, стр. 757.

թյունը և միամիտ, չմտածված սոցիալիզմը»¹³։ Ֆիլոսոֆովն այս հոգվածում մի ակամա խոստովանություն էր անում. Գորկին «ճիշտ ժամանակին հայտնելովեց, շատ խորը լարեր շոշափեց, որպեսզի արձագանքի չհանդիպեր ողջ Ռուսաստանում, որը նոր միայն սկսում էր արթնանալ»։ Սակայն չուզենալով կամ չկարողանալով ճշմարտությունն ասել «խորը լարերի» և «Ռուսաստանի արթնացման» բնույթի մասին, հեղինակն սկսում էր մեղադրանքներ բարդել «ամբոխի», «հասարակության» վրա։ Այդ նրանք էին, որ «երես տվեցին» Գորկուն, քննադատությունը չօգնեց գրողին՝ ճիշտ ճանապարհ գտնելու, որովհետև դիտեց նրան ոչ թե որպես բացարձակ անձնավորություն, այլ «օգտագործեց որպես միջոց»։ Գորկին բոսյակի մեջ ցույց տվեց «մարդու հավերժական անձնավորությունը», «ավելի ճիշտ՝ անձնավորության ծարավը»։ Այն ժամանակ նա գրող էր։ Անձնավորությունը հայտարարելով «իր արմատում ոչ մի բանի չենթարկվող» սկիզբ, միակ, հավերժական կատեգորիա, Ֆիլոսոֆովը պնդում էր, թե ինչպես առհասարակ անձնավորությունը, այնպես էլ Գորկու «բոսյակը» անհատականության կատաղի պայքարով հակադրության մեջ է հասարակության հետ, ելք է փնտրում նրանից։ Գորկու, որպես արվեստագետի, անկման պատճառն, ըստ քննադատի, այն է, որ նա այդ հակասության լուծումը տեսնում է սոցիալիզմի մեջ, «անարխիստ բոսյակին» աշխատում է խցկել «ընկեր սոցիալիստների թափքը», որով և ոչնչացնում է նրանց «բնագրական, բացարձակ, միասնական, անկրկնելի անձնավորության ծարավը»։ պայմանավորում է շրջմոլիկների ապրումները «միշտ լայրով և պայմաններով»...¹⁴ Դրանով իսկ, շարունակում էր Ֆիլոսոֆովը, Գորկին բոսյակին համարողկային կատեգորիայից դարձնում է «սոցիալ-տնտեսական տիպ»։

Հասկանալի է, թե գրական ու քաղաքական աշխարհի այս տարրերը ինչպիսի հրճվանքով պետք է ընդունեին մեծ գրողին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից հեռացնելու լուրերը։

Լենինին խիստ զայրացրել էին այդ չարամիտ հարձակումներն ու զրպարտությունները։ Ժիշտ է, Գորկին երբեք կազմակերպչորեն չէր եղել սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ, բայց նրա լիակատար համակրանքը կուսակցության գաղափարների հանդեպ և աջակցությունը բոլշևիկյան թեմին ոչ միայն պակաս չէր կուսակցության անդամների գործունեությունից, այլև իր արդյունքով շատ մեծ էր և անփոխարինելի։ Ահա թե ինչու Լենինն անհետաձգելի անհրաժեշտություն էր համարում մերկացնել այդ լուրերը և նրանց տարածողներին, հաստատել Գորկու և սոցիալ-դեմոկրատական կուսակցության կապի անխզելիությունը։

Այդ մասին Լենինը գրել է նախ իր քրոջը՝ Մարիա Իլյինիչնային. «Թանկագին Մանյուշա, այսօր ստացա «Утро Рос[си]и»-ի №-ը, որտեղ գետնի վրա են գոհհիլ տխմարություններ Գորկու մասին։ Ահավասիկ մի քանի օր է, ինչ մի քանի լրագրեր Փարիզում... և Բեռլինում... վարժվում են նույն տեսակի ստեր տարածելով»։ Լենինը նշում էր նաև, որ գերմանական «Vorwärts» («Առաջ») թերթը տպագրել է «այդ լիակատար ստի մի լավագույն հերքում, որտեղ շատ արդարացի կերպով ցույց է տրված և խիստ սրամտորեն պատմված, թե որպիսի կատարյալ անհեթեթություն և հերյուրանք է այդ բոլորը»¹⁵։

¹³ «Русская мысль», 1907, № 4, стр. 122.

¹⁴ Նույն տեղում, стр. 127.

¹⁵ Վ. Ի. Լենին, Նամակներ հարազատներին, Ե., 1943, էջ 205.

լենինը նկատի ունեւր հիշյալ թերթի այն հոդվածը, որտեղ ասված էր, որ բուրժուական թերթը «համաշխարհային հռչակ ունեցող Գորկուն շփոթել է մի տխրահռչակ Գերցիկի հետ»։ Վերջինս մեղադրվում է պրովոկացիայի մեջ, և նրա հարցը լուծվում է կուսակցական դատարանում Փարիզում¹⁶։

Քրոշը գրած նամակից մի քանի օր հետո, 1909 թ. նոյեմբերի վերջերին բուլղարիական «Պրոլետարի» թերթում հրապարակվեց լենինի հոդվածը՝ «Բուրժուական մամուլի առասպելը Գորկու վտարման մասին» վերնագրով։ Նշելով, որ «Berliner Tageblatt»-ի թղթակիցը «անաստված կերպով կրկնաստել է հատուկտոր լուրերը» և «հիանալի վաստակել է» իր հնարած «ինտերվյուններով», լենինը հատկապես մերկացնում էր այդ կամպանիայի նպատակը։ «Բուրժուական պարտիաներն ռազմապետական Գորկին դուրս գա սոցիալ-դեմոկրատական պարտիայից։ Բուրժուական թերթերը կաշվից դուրս են գալիս, որպեսզի տարածայնություններ բորբոքեն սոցիալ-դեմոկրատական պարտիայի ներսում և դրանք ներկայացնեն այլանդակ ձևով»։

Չուր են ջանք թափում բուրժուական թերթերը։ Ընկեր Գորկին իր մեծ գեղարվեստական երկերով չափազանց ամուր է կապել իրեն Ռուսաստանի և համայն աշխարհի բանվորական շարժման հետ, և նրանց այլ կերպ չի պատասխանի, քան արհամարհանքով¹⁶։

Գորկու, որպես գեղարվեստագետի «անկման», կամ «համալքը կորցնելու» մասին դատողություններն ավելի պարզունակ ձևով կրկնվում էին կովկասյան բուրժուական մամուլում։ Այս տեսակետից բնորոշ է, օրինակ, «Բակինսկի լիստոկ» թերթի դիրքը։ 1908 թ. այդ թերթը հատուկ առաջնորդող տպագրեց, որտեղ, ինչպես բուրժուական մյուս թերթերում, Գորկին քննադատվում էր նախ և առաջ մարքսիզմի, սոցիալ-դեմոկրատիայի, անձամբ լենինի հետ կապ ունենալու և «նոթեր քաղքենիության մասին» հոդվածի համար։

«Այսպես մարքսիզմի թեորիան գիտական դեկտրինայից դարձավ սոցիալ-դեմոկրատական կրոն...», — գրում էր այդ թերթը։ — Եվ ոչ այլ ոքի, քան Մաքսիմ Գորկուն էին պատկանում իրենց անհեթեթությանը և ֆանտաստիկ սահմանափակությանը նշանավոր ֆելիետոնները քաղքենիության մասին, որտեղ մարդասիրությունը որակվում էր որպես թառամած ծնունդ բուրժուական ցածր ոգու, իսկ և Տոլստոյն ու Դոստոևսկին հայտարարվում էին ամենասովորական քաղքենիներ, ամբողջ եվրոպական և ռուսական միտքը համատարած և լիակատար քաղքենիություն...»¹⁷։

Բուրժուական մամուլը կանգ չէր առնում նման բացարձակ աղավաղումների առաջ, այնքան անտանելի էր նրա համար տեսնել գեղարվեստական հանձարը սոցիալ-դեմոկրատիայի հետ միևնույն բանակում։ Պատահական չէր, որ հատկապես հիշատակվում էր և քննադատվում Գորկու այն հոդվածաշարը, որ տպագրվել էր բուլղարիական թերթում և արժանացել լենինի դրվատանքին։

Սակայն Գորկու շուրջը ավելի մեծ աղմուկ բարձրացրեց Անդրկովկասի մի այլ թերթ՝ «Բաքուն»։ Թեև այս աղմուկը բարձրացավ ավելի ուշ և քննադատական խոսքը վերաբերում էր Գորկու առանձին ստեղծագործություններին, բայց դրանից չէին փոխվում այդ քննադատության ոչ սկզբունքները, ոչ նպատակները։ Զիշտ այնպես, ինչպես Ֆիլոսոֆովի հոդվածում, այստեղ կրկնվում

16 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հ. 18, էջ 180—181։

17 «Бакинский листок», 1908, № 7, 22 сент.

էր այն միտքը, որ Գորկին սպառնում է այն պատճառով, որ կապվել է սոցիալ-դեմոկրատիայի հետ:

Թերթի մշտական աշխատակից և դրախոս, գրական քննադատ Սերգեյ Ալվազովը, հանդես գալով «Վասսա Ժելեզնովա» պիեսի բեմադրության առթիվ և ոչ մի խոսք չասելով բեմադրության մասին, քննադատում էր պիեսը, որպես գրական երկ: Գորկու «Քաղքենիներ», «Հատակում», «Հովիվներ» պիեսները բերին ընթերցողին «ինչ-որ կենդանի խոսք», մինչդեռ «Վասսա Ժելեզնովան» լսում են ձանձրություն, մշտական ակամա հորանջումով և տարակարծությամբ:

Իսկ և իսկ Ստեշկինի, Չուկովի և Ֆիլոսոֆովի ու այլոց նման Ալվազովը իր հոգվածում աշխատում էր այն միտքը զարգացնել, թե Գորկին գրող էր այն ժամանակ, երբ հանդես էր գալիս որպես բրոնտա հանուն բունտի», այն ամենի դեմ, ինչը կազմում էր սոցիալական շերտերի կյանքը, լինել դա ազնվականական, վաճառականական, քաղքենիական, ինչպես նաև բանվորական: Կամ գյուղացիական: Ալվազովը Գորկու մեջ գնահատում էր նրա՝ սոցիալական կյանքից իբր թե «մի կողմ» գտնվելը և «բոսյակի» միջոցով բրոնտ հանուն բունտի» նշանաբանը: Նա բառացի կրկնում էր արդեն շարունակ դարձած այն մտքերը, թե երբ Գորկին դրում էր «բոսյակի» մասին, որպես հպարտ անհատականության, և նրա մեջ շեշտում էր անկախ ու ազատ, հասարակությունից հեռու իր անձի ազատության պաշտպանության մոտիվը, այն ժամանակ: Նա իսկական գրող էր, և չէր ներկայանում մտավորականությանը որպես այն խուլիգանը, ինչպես նա իրեն մեծ մասամբ դրսևորեց հետագայում...»¹⁸: Բայց: անցան տարիներ, և խելոք մարդիկ Գորկուն միտք ներշնչեցին, որ բավական չէ միայն ժխտելը, պետք է ունենալ նաև ապագա հասարակության որոշակի իդեալներ: Եվ այն ժամանակ, երբ գրողը լսեց այդ խորհուրդները, դադարեց գրող լինելուց, դարձավ պրոպագանդիստ: Այդ ժամանակից սկսվեց իրականացնելու փորձերը:

Ալվազովի հոգվածը վերջանում էր «խեղճ Գորկի» բառերով:

Այդ հոգվածին անմիջապես պատասխանեց «Բաբու» թերթի խմբագր-հրատաֆոր Վերմիշևի եղբորորդի Ալեքսանդր Վերմիշևը՝ «Савицкнй» կեղծանունով: Դեռ այն ժամանակ Ա. Վերմիշևը աչքի էր ընկնում իր հեղափոխական հայացքներով, հետագայում նա մտավ սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ և զոհվեց քաղաքացիական կռիվների ժամանակ: Նա աշխատակցեց է «Պրավդային», գրել է պիեսներ: Ալվազովին գրած նրա պատասխանը կուսակցական դիրքերից արված գրական քննադատության օրինակ է և հանդիսանում է լինելի՝ դեպի Գորկին ունեցած վերաբերմունքի և գնահատականների արձագանք: Նա իր հոգվածի վերնագիր էր ընտրել այն բառերը, որոնցով վերջանում էր Ալվազովի հոգվածը: Ա. Վերմիշևն ասում էր, որ յուրաքանչյուր քննադատ իրավունք ունի կարծիք հայտնել որևէ գրողի մասին: Բայց եթե նա խոսում է գրողի մի կոնկրետ երկի մասին, ապա պարտավոր է ամենից առաջ այդ երկի վերաբերյալ բերել իր փաստարկումներն ու ապացույցները և նոր միայն անել եզրակացություններ, մանավանդ եթե այդ երկը պատկանում է մի գրողի, որի շուրջն ստեղծված է հսկա գրականություն: Մինչդեռ Ալվազովը, թողած այդ երկը, չանելով նրա վերլուծության որևէ փորձ, հայտնում է

¹⁸ «Бакы», 1910, № 248.

ծեծված կարծիքներ Գորկու տաղանդը ընդհանրապես մարելու, նրա ամբողջ ստեղծագործության մասին և վերջում գրողի մեծ անվան կողքին դնում է «խեղճ» բառը:

Արդյոք Գորկու տաղանդն է մարել, թե՞ փոխվել է այն «աբիվատելը», որը 1903—1904 թթ. աթոռները կոտրելով, հերթերում քրտնքի մեջ կորած՝ տոմս էր ձեռք բերում Գորկու «Հատակումն» ու «Քաղքենիները» դիտելու համար: Քանի որ Այվազովն ականատես է եղել Գորկու այս արտակարգ հաջողությանը, ապա նա պետք է քննադատի բարեխղճություն և ազնվություն ունեւոր հետաքրքրվելու և պատասխանելու այդ հարցին՝ փոխվե՞լ է արդյոք Գորկին:

Եվ ի՞նչ ունի այստեղ կուսակցությունը... Այդ քաղքենին է, որ «կյանքի դաժան ճշմարտության» ազդեցության տակ ցավ է զգում մեջքին, ձեռքերն անզուսպ մղումով ձգվում են դեպի կողքերը, ծնոտը դողում է և դանդաղորեն կախվելով բացում է լայնորեն հորանջող քաղքենիական բերանը... Այդ քաղքենին է փոխվել, այդ նա է «խեղճ», որ հարց է տալիս, թե ինչի համար է «Վասսա Ժելեզնովան»¹⁹:

Ինչպես և պետք էր սպասել, Վերմիշևի հոգվածով շապավեց «Վասսա Ժելեզնովայի» մասին Բաքվում սկսված բանավեճը: Երեք օր հետո նույն թերթում կրկին հանդես եկավ Այվազովը «Գորկու պաշտպաններին» վերնադիրը կրող պատասխանով²⁰:

Խոսքը վերաբերում էր գլխավորապես «Каспий» թերթում տպագրված «Անրիի» հոգվածին, որտեղ խիստ քննադատված էր Այվազովն իր վերը նշված հոգվածի համար: Բայց վերջինս, սրամիտ երևալու հավակնություններով դիտողություններ էր անում նաև «Սավիցկուն»։ Չնայած դրան, պատասխանի հիմնական թեզը դարձյալ Գորկու պիեսի քննադատությունն էր, որը այս անգամ էլ հանդում էր ձևապաշտության և պիեսի առանձնահատկությունների բացարձակ անտեսման: Իբր «Վասսա Ժելեզնովայի» մեջ չկա ֆարսուլա, չկան դեպքեր, որոնք իրենց տրամաբանական զարգացմամբ կարողանային հանդիսատեսին հասցնել պիեսի իմաստը, այնպես, ինչպես հասկացվում է «Համլետի» և մյուս թրոլոր իրոք գեղարվեստական պիեսների» միտքը:

Իսկ «խեղճ Գորկին» շարաբաստիկ արտահայտության մասին խոսելով, նա արդարանում էր նրանով, որ Գորկին պատմվածքում և վեպում մինչև օրս ընդունակ էր «երբեմն» փայլել առաջվա պես, իսկ դրամայում «սարսափելի գունատ է»։ Ահա այդ պատճառով վերջին անհաջող պիեսներից հետո Այվազովն ավելի հարմար բառեր չի գտել Գորկուն բնութագրելու համար:

Այստեղ արդեն խմբագրությունը հարկ էր համարել միջամտել: «Տպագրելով մեր թատերական քննադատ պարոն Ս. Ա.-ի ներկա պատասխանը, խմբագրությունն իր պարտքն է համարում հայտարարել, որ չի բաժանում նրա հայացքները: Խոսել «Վասսա Ժելեզնովա» պիեսում իմաստի կատարյալ բացակայության մասին՝ չափազանց համարձակ է: Նրա մեջ, անկասկած, կա իմաստ, որն արտահայտվում է հենց թեկուզ լիովին կենսական տեսարանների պատկերման մեջ...

¹⁹ Նույնը, 255:

²⁰ Նույնը, 258:

Ինչ վերաբերում է «խեղճ Գորկի» արտահայտությանը, ապա խմբագրությանը ենթադրում է, որ պարոն Ս. Ա.-ն չարաշահել է իր «արիությունը» և ամբողջովին բաժանում է պ. Սավիցկու հայացքը այդ առթիվ, որը, ցանկանալու դեպքում, դժվար չէ հասկանալ: «Խեղճ Գորկի» բառերի իմաստը չափազանց լայն է, նրանց մեջ լսվում է թաղման դանդա: Մինչդեռ համաշխարհային դրականության և դրական հանճարների ու տաղանդների կենսագրության մեջ կարելի է ցույց տալ շատ դեպքեր, երբ ստեղծագործության մեջ մեծությունը փոխվում է միջակության և շնչինության, որպեսզի հետո նորից փոխվի մեծության...

Արիությունը լավ դիժ է, բայց ավելի լավ դիժ է չափի զգացումը²¹:

Թերթի էջերից դուրս գալով՝ Գորկու պիեսի մասին վեճը ծավալվեց Բաբլի «Գեղարվեստական խմբակում»: Հաջորդ ամսին, 1910 թ. դեկտեմբերին, «Բարուն» տպագրեց այդ խմբակի նիստերում տեղի ունեցած վեճի համառոտ շարադրանքը: Ընդ որում խմբակի անդամները նախօրոք դիտել էին ներկայացումը: Այվազովի կրկնում էր Գորկու տաղանդի սպառման մասին իր տրիստիկական թեզը: Իբրև թե Գորկին «կտրել է իր հին ոճի ծաղիկները, նրան ղրկել է դույններից... Պրիմիտիվների գեղագետը ինչ-որ միանգամից լռեց, հենց որ ամբողջ պահանջեց ոչ-պրիմիտիվ բան: Արդյոք չի՞ ասել Գորկին ամենը, ինչ ուներ և կարող էր ասել...»²²:

Վիճաբանությունների ժամանակ հանդես եկած տասը հոստոններից միայն երկուսը՝ Մ. Ս. Ալեյնիկով անունով մի քննադատ և «Բաբուն» թերթի խմբագիր Խրիստաֆոր Վերմիշևը, վերջինս լուրջ վերապահումներով, պաշտպանել են Այվազովի տեսակետները: Մյուսները, այդ թվում պրոֆեսիոնալ հեղափոխական Վլադիսլավ Կասպարյանցը, հիմնական առարկություններ են բերել, ինչպես նաև ցույց տվել Այվազովի կողմնակալ վերաբերմունքի ակունքները: Գ. Սաղովսկի անունով մի բանախոս ընդգծում է, որ ժամանակակից քննադատության մեջ գոյություն ունի ժխտողական մոտեցում ոչ միայն դեպի Գորկին, այլև դեպի Չեխովն ու Տոլստոյը: Այդ հոսանքն աշխատում է «պսակագրած անել» գրականության այդ հսկաներին: Իսկ Գորկուն ուզում են ուղղակի «թաղել»: «Կասպի» թերթի խմբագիր Ա. Ա. Վեյնբերգը դրվատել է Գորկու պիեսը: Նրա ելույթը վերջանում է այս խոսքերով. «Վասսա Ժելեզնովան» լավ, լուրջ պիես է, լի կյանքով և խորը իմաստով»:

«Բաբուն» թերթի էջերում ծագած այս վեճերը բնորոշ էին Անդրկովկասի մտավորականության մեջ Գորկու շուրջն ստեղծված մթնոլորտի համար, որը և առիթ տվեց Շահումյանին հանդես գալ Բաբլի բոլշևիկյան «Սովրեմեննայա ժիզն» շաբաթաթերթի հենց առաջին համարում «Գորկու մասին» հոդվածով (1911 թ.):

Ճիշտ այնպես, ինչպես լենինը, Շահումյանը Գորկուն բնութագրում էր որպես «գեղարվեստական մեծ տաղանդ», որն իր «բնական զարգացման ընթացքով եկավ բանվորների մոտ», «կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, դարձավ նրանց երգիչն ու կենցաղագիրը»: Շահումյանը լենինյան տեսակետով էր բացատրում Գորկու նկատմամբ բուրժուական մամուլի վերաբերմունքի փոփոխությունը: Եթե մի ժամանակ Գորկին «բանաստեղծական մրրկահավի» իր

²¹ Նույն տեղում:

²² Նույնը, 1910, № 286:

ծեծված կարծիքներ Գորկու տաղանդը ճշգրիտ անհրաժեշտ մարելու, նրա ամբողջ ստեղծագործության մասին և վերջում գրողի մեծ անվան կողքին դնում է «խեղճ» բառը:

Արդյոք Գորկու տաղանդն է մարել, թե՞ փոխվել է այն «աբիվատելը», որը 1903—1904 թթ. աթոռները կոտրելով, հերթերում քրտնքի մեջ կորած՝ տոմս էր ձեռք բերում Գորկու «Հատակումն» ու «Քաղքենիները» դիտելու համար: Քանի որ Այվազովն ականատես է եղել Գորկու այս արտակարգ հաջողությունը, ապա նա պետք է քննադատի բարեխղճություն և ազնվություն ունեւոր հետաքրքրվելու և պատասխանելու այդ հարցին՝ փոխվել է արդյոք Գորկին:

Եվ ի՞նչ ունի այստեղ կուսակցությունը... Այդ քաղքենին է, որ «կյանքի դաժան ճշմարտության» ազդեցության տակ ցավ է զգում մեջքին, ձեռքերն անզուսպ մղումով ձգվում են դեպի կողքերը, ծնոտը դողում է և դանդաղորեն կախվելով բացում է լայնորեն հորանջող քաղքենիական բերանը... Այդ քաղքենին է փոխվել, այդ նա է «խեղճ», որ հարց է տալիս, թե ինչի համար է «Վասսա Ժելեզնովան»¹⁹:

Ինչպես և պետք էր սպասել, Վերմիշևի հողավածով չսպառվեց Վասսա Ժելեզնովայի մասին Բաքվում սկսված բանավեճը: Երեք օր հետո նույն թերթում կրկին հանդես եկավ Այվազովը «Գորկու պաշտպաններին» վերնագիրը կրող պատասխանով²⁰:

Խոսքը վերաբերում էր գլխավորապես «Каспий» թերթում տպագրված «Անրիի» հողավածին, որտեղ խիստ քննադատված էր Այվազովն իր վերը նշված հողավածի համար: Բայց վերջինս, սրամիտ երեւալու հավակնություններով դիտողություններ էր անում նաև «Սավիցկուն»: Չնայած դրան, պատասխանի հիմնական թեզը դարձյալ Գորկու պիեսի քննադատությունն էր, որը այս անգամ էլ հանգում էր ձևապաշտության և պիեսի առանձնահատկությունների բացարձակ անտեսման: Իբր Վասսա Ժելեզնովայի մեջ չկա ֆաբուլա, չկան դեպքեր, որոնք իրենց տրամաբանական զարգացմամբ կարողանային հանդիսատեսին հասցնել պիեսի իմաստը, այնպես, ինչպես հասկացվում է «Համլետի» և մյուս ռուս իրոք գեղարվեստական պիեսների» միտքը:

Իսկ «խեղճ Գորկի» չարաբաստիկ արտահայտության մասին խոսելով, նա արդարանում էր նրանով, որ Գորկին պատմվածքում և վեպում մինչև օրս ընդունակ էր «երբեմն» փայլել առաջվա պես, իսկ դրամայում «սարսափելի գունատ է»: Ահա այդ պատճառով վերջին անհաջող պիեսներից հետո Այվազովն ավելի հարմար բառեր չի գտել Գորկուն բնութագրելու համար:

Այստեղ արդեն խմբագրությունը հարկ էր համարել միջամտել: «Տպագրելով մեր թատերական քննադատ պարոն Ս. Ա.-ի ներկա պատասխանը, խմբագրությունն իր պարտքն է համարում հայտարարել, որ չի բաժանում նրա հայացքները: Խոսել «Վասսա Ժելեզնովա» պիեսում իմաստի կատարյալ բացակայության մասին՝ չափազանց համարձակ է: Նրա մեջ, անկասկած, կա իմաստ, որն արտահայտվում է հենց թեկուզ լիովին կենսական տեսարանների պատկերման մեջ...

¹⁹ Նույնը, 255:

²⁰ Նույնը, 258:

Ինչ վերաբերում է «խեղճ Գորկի» արտահայտությանը, ապա խմբագրությանը ենթադրում է, որ պարոն Ս. Ա.-ն չարաշահել է իր «արիությունը» և ամբողջովին բաժանում է պ. Սավիցկու հայացքը այդ առթիվ, որը, ցանկանալու դեպքում, դժվար չէ հասկանալ: «Խեղճ Գորկի» բառերի իմաստը չափազանց լայն է, նրանց մեջ լսվում է թաղման դանդաղ: Մինչդեռ համաշխարհային դրականության և դրական հանճարների ու տաղանդների կենսագրության մեջ կարելի է ցույց տալ շատ դեպքեր, երբ ստեղծագործության մեջ մեծությունը փոխվում է միջակության և շնչինության, որպեսզի հետո նորից փոխվի մեծության...

Արիությունը լավ դիժ է, բայց ավելի լավ գիծ է չափի զգացումը²¹:

Թերթի էջերից դուրս դալով՝ Գորկու պիեսի մասին վեճը ծավալվեց Բաքվի «Գեղարվեստական խմբակում»: Հաջորդ ամսին, 1910 թ. դեկտեմբերին, «Բաքում» տպագրեց այդ խմբակի նիստերում տեղի ունեցած վեճի համառոտ շարադրանքը: Ընդ որում խմբակի անդամները նախօրոք դիտել էին ներկայացումը: Այվազովը կրկնում էր Գորկու տաղանդի սպառման մասին իր տրիստիկական թեզը: Իբրև թե Գորկին ձեռք էր հին ոճի ծաղիկները, նրան զրկել է դուլներին... Պրիմիտիվների գեղագետը ինչ-որ միանգամից լռեց, հենց որ ամբողջ պահանջեց ոչ-պրիմիտիվ բան: Արդյոք չի՞ ասել Գորկին ամենը, ինչ ուներ և կարող էր ասել...»²²:

Վիճաբանությունների ժամանակ հանդես եկած տասը հոստոններից միայն երկուսը՝ Մ. Ս. Ալեյնիկով անունով մի քննադատ և «Բաքու» թերթի խմբագիր Նիստաֆոր Վերմիշևը, վերջինս լուրջ վերապահումներով, պաշտպանել են Այվազովի տեսակետները: Մյուսները, այդ թվում պրոֆեսիոնալ հեղափոխական Վլադիսլավ Կասպարյանցը, հիմնական առարկություններ են բերել, ինչպես նաև ցույց տվել Այվազովի կողմնակալ վերաբերմունքի ակունքները: Գ. Սադուլսկի անունով մի բանախոս ընդգծում է, որ ժամանակակից քննադատության մեջ գոյություն ունի ժխտողական մոտեցում ոչ միայն դեպի Գորկին, այլև դեպի Չեխովն ու Տոլստոյը: Այդ հոսանքն աշխատում է պասակազերծ անել՝ գրականության այդ հսկաներին: Իսկ Գորկուն ուղղում են ուղղակի «թաղել»: «Կասպի» թերթի խմբագիր Ա. Ա. Վեյներգը դավաճան է Գորկու պիեսը: Նրա ելույթը վերջանում է այս խոսքերով. «Վասսա Ժելեզնովան» լավ, լուրջ պիես է, լի կյանքով և խորը իմաստով:

«Բաքու» թերթի էջերում ծագած այս վեճերը բնորոշ էին Անդրկովկասի մտավորականության մեջ Գորկու շուրջն ստեղծված մթնոլորտի համար, որը և առիթ տվեց Շահումյանին հանդես գալ Բաքվի բոլշևիկյան «Սովրեմեննայա ժիզն» շաբաթաթերթի հենց առաջին համարում «Գորկու մասին» հոդվածով (1911 թ.):

Ճիշտ այնպես, ինչպես լենինը, Շահումյանը Գորկուն բնութագրում էր որպես «գեղարվեստական մեծ տաղանդ», որն իր «բնական զարգացման ընթացքով եկավ բանվորների մոտ», «կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, դարձավ նրանց երգիչն ու կենցաղագիրը»: Շահումյանը լենինյան տեսակետով էր բացատրում Գորկու նկատմամբ բուրժուական մամուլի վերաբերմունքի փոփոխությունը: Եթե մի ժամանակ Գորկին «բանաստեղծական մրրկահավի» իր

²¹ Նույն տեղում:

²² Նույնը, 1910, № 286:

կանչով կարող էր սիրելի լինել բուրժուական ինտելիգենտական հասարակությանը, ապա հետագայում, երբ նա ձեռնկվեց վառ կարմիր գույնով և երես դարձրեց բուրժուական հասարակությանը՝ ղրանց թվում նաև իր արհեստագիտական գործերից, որոնք այդ ժամանակամիջոցում կորցրել էին ամեն մի հակում դեպի վարդապետներ, — այն ժամանակ Գորկին իսկույն նրանց աչքում շրջվեց իր հմայքից: Երեկվա երկրպագուների սերը փոխարինվեց սառնություն, դժգոհություն, անգամ ատելություն դեպի նա»²³:

Շահումյանը ցույց էր տալիս, որ Անդրկովկասում ևս չի կարելի գրտնել որևէ իրեն ճառաչողական անվանող թերթ, լինի դա մայրաքաղաքային թե՛ գավառական, որ ժամանակ առ ժամանակ Վրիժառու չլինեի Գորկուց նրա համար, որ նա երես էր դարձրել «հասարակությունից» և գնացել բանվորների մոտ:

Բայց, որպես ավելի ցայտուն օրինակ, Շահումյանը կանգ էր առնում «Բաբուլ» թերթի քննադատ Ս. Այվազովի «հերոսաբերական ոտնձգության» վրա: Այդ քննադատը, հեղինակը ասում էր Շահումյանը, «իր համար իսկ անսպասելիորեն, վաղվեց այնպիսի քնքշություն դեպի «պրիմիտիվներին» երգելը, այնքան ուժեղ «ափսոսաց» ձեռք զրկում», որ անգամ «Բաբուլ»-ի խմբագրությունը ղրանից իրեն անհարմար զգաց»²⁴:

Սակայն Շահումյանին է՛լ ավելի վրդովել էր նույն թերթի մշտական աշխատակից և «թերթոնների» հեղինակ Գր. Ստարցևի հոդվածը, որին պատշաճ պատասխան տվող չէր եղել: Մինչդեռ այդ հոդվածը, թեև անճաշակ և տգետ, ուղղակի թյուրիմացության մեջ կարող էր գցել ընթերցողին: Նրա մեջ Գորկուն վերագրվում էին այնպիսի մտքեր ու հայացքներ, որ չկային վերլուծվող երկերում: Խոսելով «Տրտունջներ» և «Մորդովկա» պատմվածքների մասին, Ստարցևն ասում էր, որ Գորկու հերոսը դժգոհ է սոցիալիզմից, մոլորվել վրա է բարդում աշխարհի բոլոր մեղքերը, իսկ Գորկին, այդ հերոսի ստեղծողը, «ոչ մի խոսք չի ասում» նրա գանգատների դեմ, հետևապես նա «անվերապահորեն համաձայն է նրա հետ»²⁵:

Շահումյանը, տալով Գորկու «Տրտունջներ» պատմվածքի ճշմարիտ վերլուծությունը, սուր ծաղրի է ենթարկում հոդվածագիրն: «Եվ ահա հանդես է գալիս Ստարցևը, որ Գորկուն նույնացնում է այդ սպայի հետ, հավատացնում է ընթերցողին, որ սպայի բերանով խոսում է ինքը Գորկին... և-օ՛, ճակատագրի ծաղր, Ստարցևը ոտքի է ելնում պաշտպանելու սոցիալիզմը, պաշտպանելու ռուս գյուղացուն և բանվորներին Գորկու հարձակումներից ու զրպարտություններից: Կարո՞ղ էք արդյոք երևակայել, ընթերցող, այդ տեսարանը...»²⁶:

Ստարցևը չէր հասկացել նաև «Մորդովկա» պատմվածքը: Նա գռհհիկ մեկնաբանություններ էր տալիս հերոսի արարքներին, աղավաղում էր պատմվածքի գաղափարը: Կուսակցության գործին նվիրված բանվորի ընտանիքում վեճեր են լինում ընտանիքին քիչ ժամանակ հատկացնելու, կնոջ և երեխայի նկատմամբ պակաս ուշադիր լինելու, ժամանակի և ուժերի մեծ մասը իր գաղափարական պայքարին ծառայեցնելու պատճառով: Եվ ահա Ստարցևը դրանից

²³ Մտեփան Շահումյան, Գրականության մասին, 1948, էջ 62:

²⁴ Նույն տեղում:

²⁵ «Բաբուլ», 1911, № 33:

²⁶ Ստ. Շահումյան, Գրականության մասին, էջ 64:

եզրակացնում է, որ Գորկու հերոսը հրաժարվում է իր գաղափարներից հանուն իր գեղեցիկ կնոջ, հետևապես Գորկին դավաճանում է սոցիալիզմի գաղափարներին, զրպարտում է բանվորներին: Այստեղ Շահումյանը վկայակոչում է Գորկու պատմվածքը. «Սակայն բաց արեք, ընթերցող, «Современный мир»-ի առաջին համարը (այս տարվա) և կարդացեք այդ լավ պատմվածքը: Տեսե՛ք, թե ի՞նչ անհեթեթություններ է պատմում ձեզ Ստարցևը»²⁷:

Համառոտ վերլուծելով պատմվածքը, Շահումյանը ցույց է տալիս, որ «Գորկին պատկերում է, և պատկերում է ճշգրիտ ու շնորհալի, առաջավոր բանվորների կյանքում սովորական անհամաձայնություններն ընտանիքի հետ և այն հոգեկան դրաման, որ նրանք ապրում են... Բայց ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ, որ Պավլին իբր թե պարտվել է, որ նա փոխել է իր իդեալները կնոջ գեղեցիկ մարմնի հետ»²⁸:

Գորկու այս պատմվածքների վերլուծությունը ցույց է տալիս Շահումյանի ոչ միայն գաղափարական հայացքների խորությունը, այլև քննադատական նուրբ ճաշակը և բարձր կուլտուրան:

Այվազովի և Ստարցևի տիպի քննադատների վերաբերմունքի սուր փոփոխությունը բացատրելով նրանով, որ Գորկին «ներկվել էր վառ կարմիր գույնով», որ նա «եկել էր բանվորների մոտ», — Շահումյանն ավելացնում է: «Թուր նման «քննադատները», խոսելով բանվորական գրող Գորկու մասին, ինչպես նաև առհասարակ այն ամենի մասին, ինչ վերաբերում է բանվորներին, ոչ մի կերպ չեն կարողանում, գիտակցորեն թե անգիտակցորեն, խուսափել ատից, խեղաթյուրումներից, զրպարտություններից»²⁹:

Շահումյանի այս հոգվածում՝ «Գորկու մասին»՝ կար մի ուրիշ, կարևոր հատված, որն անմիջականորեն Գորկու ստեղծագործությանը չէր վերաբերում, բայց նշանավորում էր նոր տիպի գրողի վերաբերմունքը դեպի ծլարձակող ժողովրդական դրականությունը, դեպի գրականության ապագան: Հասկանալի է, որ բուրժուական քննադատությունը ոչ մի ուշադրություն չէր դարձնում Գորկու հասարակական, գրական գործունեության այդ կողմի վրա:

Շահումյանն իր հոգվածում պատմում է, թե ինչպես Գորկին, հանդես գալով «Սովրեմեննի միր»-ի 1911 թ. փետրվարի համարում, ընթերցողի առաջ բացում էր ոչ-պրոֆեսիոնալ գրողների մի նոր աշխարհ, որը թեև չունեի գեղարվեստական մեծ արժանիքներ, բայց դալիս էր կյանքից, որը ժամանակի թշվառության, զրկանքների մառախուղից կարողանում էր նայել դեպի լույսն ու ազատությունը: Գորկուն, որպես նոր տիպի գրողի, հրապուրում էր աշխատանքի մարդկանց այդ զարմանալի կենսասիրությունն ու լավատեսությունը: Շահումյանը հիացած էր Գորկու այդ սիրով դեպի «դեմոսը», նրա խնամքով և զարմանալի ուշադրությամբ, որով կարողում էր այդ անհամար նամակները: «Հոգվածի յուրաքանչյուր տողից, — ասում է Շահումյանը, — երևում է հեղինակի զարմանալի նուրբ, ազնիվ հոգին, լցված անսահման սիրով դեպի «սարսափելի կյանքի մարդիկ», ինչպես ինքն է արտահայտվում նրանց մասին: Ռուս, համենայն դեպս ժամանակակից գրականության մեջ մենք չգիտենք մի

27 Նույն տեղում, էջ 65:

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում, էջ 66—67:

այլ գրող այդ աստիճանի բարոյապես նրբազգաց ու մաքուր, ինչպիսին Գորկին է»³⁰:

Ընդգծելով Գորկու բացառիկ ջերմ վերաբերմունքը դեպի ժողովրդի մարդիկ, դեպի նրանց հոգևոր կյանքն ու պահանջմունքները, Շահումյանը մի անգամ էլ հեգնանքով դիտողություն է անում Գորկու քննադատներին: Ոչ, Գորկին ոչ մի նմանություն չունի «հիասթափված, նվնվացող, տրտնչացող, բանվորներին զրպարտող, սոցիալիզմը հրեական գյուտ հայտարարող, համարյա թե սեհարյուրակալին այն Գորկուն—ինչպիսին ցանկացել է պատկերել նրան բուրժուական թերթը»³¹:

Շահումյանը համառոտակի կանգ է առնում Գորկու գաղափարական որոշ շեղումների վրա, միաժամանակ նշելով, որ դրանք ժամանակին նկատվել են «մարքսիստական քննադատության կողմից»: Շահումյանը խոսում է «նարոդնիկական տարրերի» մասին Գորկու աշխարհայեցողության մեջ, որոնք երբեմն նրան բերում են «սխալ եզրակացությունների» ինտելիգենցիայի և դրա հետ կապված հարցերում:

«Չնայելով այդ բոլորին,— բացականչում է նա,— Գորկին պրոլետարական գրականության զարդն ու պարծանքն է: Եվ ինչպես լենինը առանձին պարծանքով ասում էր, որ Գորկին «պրոլետարական արվեստի գործում հսկայական պլյուս է, չնայած նրա համակրանքին դեպի մախիզմն ու օտղովիզմը», այնպես էլ Շահումյանը, նշելով, որ չի կարելի լռությամբ անցնել նրա սխալների կողքով, միաժամանակ հաստատում է:

«Եվ բանվորները հպարտությամբ կարող են հայտարարել. «Այո, Գորկին մերն է. նա մեր արվեստագետն է, մեր բարեկամն ու զինակիցը՝ աշխատանքի ազատագրության վեհ պայքարի մեջ»³²:

Գորկու ստեղծագործության մասին մի անգամ ևս ջերմ խոսք ասելու առիթ տվեց Շահումյանին «Լեռնապիսի» 1916 թ. հուլիսյան համարի և նրա էջերում Գորկու «Մառայության մեջ» վիպակի երևան գալը: «Պայքար» թերթում տպագրված գրախոսականի մեջ Շահումյանը «Մառայության մեջ» վիպակը բնութագրում է որպես «Լեռնապիսի» այդ գրքի «զարդը», նշում է, որ «Մանկություն» վիպակի հետ միասին այդ երկը «գրավելու է աչքի ընկնող տեղ ուսական գեղարվեստական գրականության ամենափայլուն գործերի շարքում»: «Գորկու ամեն մի տողը կարդացվում է մեծ էսթետիկական հաճույքով և հետաքրքրությամբ»,— ասում է նա³³:

Ստեփան Շահումյանի հոգվածը «Գորկու մասին» ծնվեց Գորկու շուրջը մղվող բուռն պայքարի մեջ: Նրա գաղափարական ուղղությունը և Գորկու թե՛ ստեղծագործության և թե՛ որպես հասարակական գործչի դերի գնահատությունը գալիս էր լենինյան հայացքներից և Կովկասի իրականության մեջ կատարեց այն դերը, ինչ կատարեցին լենինի հողվածները ուսական գրական և հասարակական կյանքում:

30 Նույն տեղում, էջ 68:

31 Նույն տեղում, էջ 76:

32 Նույն տեղում, էջ 77:

33 «Պայքար», 1916, 37:

Բուրժուական քննադատության շարամիտ հարձակումներից Գորկուն պաշտպանեցին, տասական թվականների նրա ստեղծագործությունների ճշմարիտ գնահատականը տվեցին նաև ուրիշ մարքսիստ քննադատներ։ «Պայքար» թերթի էջերում Ասքանազ Մուսվաթյանը և Արտաշես Կարինյանը հոգևածներ տպագրեցին Գորկու «Հեքիաթների» մասին։

Մուսվաթյանի հոգևածն ուղղված էր Գորկու «մեծ ու պստիկ» այն քննադատների դեմ, որոնք «մի տասնամյակ առաջ» Գորկուն համարում էին «խոշոր, տաղանդավոր գրող», իսկ այժմ, երբ «Գորկին որոշակի հարեց բանվոր դասակարգի շարժման», «շարախինդ անկնարկներ էին անում Գորկու տաղանդի «շորացման», «այլասեռման» մասին և գուշակում, որ «սոցիալ-դեմոկրատական ծրագիրը» վերջնականապես կսպանե Գորկուն, իբրև գեղարվեստագետ գրողի»³⁴։

Մուսվաթյանը նույնպես Գորկու նկատմամբ վերաբերմունքի փոփոխության պատճառը տեսնում էր գաղափարական անհաշտելիության մեջ։ Բուրժուական քննադատության տեսակետից «պրոլետարական շարժումը ոչ մի առնչություն չունի գեղարվեստի հետ, որովհետև գեղարվեստը ապագասակարգային է»։ Սակայն Գորկու նոր ստեղծագործությունները եկան հերքելու այդ հին ու մշակված տեսակետները։ Կարճ ժամանակում Գորկին գրեց մի ամբողջ շարք տաղանդավոր գործեր՝ «Лето», «Чудаки», «Городок Окуров», «Жизнь Матвея Кожемякина», «Сказки», ապա նաև «Детство». Այդ նոր գործերն ապացուցեցին, որ «պրոլետարական աշխարհայացքն ու աշխարհզգացումը Գորկու գեղարվեստական ստեղծագործության հզոր թափ են տվել և հարստացրել բուրժուական մտքերին անհասանելի ապրումներով։ Ո՞ր բուրժուական քննադատն այժմ կհանդգնի ասել, որ նոր Գորկու երկերը թույլ են գեղարվեստականի կողմից, որ նրա ստեղծած պատկերները կեղծ են կամ մտաքաժին»³⁵։

Գորկու այս նոր ստեղծագործություններն ապացուցում են սոցիալիստական դրականության, որպես նոր, պրոլետարական գրականության լավատեսական ոգին, կենսուրախ հայացքը։ «Հեքիաթները» «ողողված են խոր, մարդկային անկեղծ սիրով ու մարգարեական հավատով դեպի մարդկության պայծառ ապագան։ Ամբողջ գրքից բուրում է մի զարմանալի ու վարակիչ լավատեսություն, կենսաթրթիռ աշխարհզգացում»։

Ա. Կարինյանը «Մարքսիմ Գորկու «Հեքիաթները» հոգևածում Գորկուն բնորոշում է որպես «ժամանակակից դեմոկրատիայի գեղագետ»։ Եթե Գորկու հայ պաշտպանների վերը նշված հոգևածներում քննադատության սլաքն ուղղված էր ընդհանրապես բուրժուական քննադատության դեմ, ապա Կարինյանի խոսքը կոնկրետացված է դեկադենտ բանաստեղծների և Գորկու հակադրության շուրջը։ «Եթե դեկադենտ պոետի համար իրական կյանքը միշտ կոշտ է, կոշտ է նույնիսկ «աղմկալի հուլզներով» լեցուն միջոցին, ապա Գորկու համար այդ նույն «կոշտ» կյանքը հմայիչ է և լի յուրօրինակ պոեզիայով։ Որպես կյանքի քանդակագործ—նա որոնում է՝ գեղեցիկը կյանքի մեջ»³⁶։

³⁴ «Պայքար», 1916 թ., № 10։

³⁵ Նույն տեղում։

³⁶ Նույն տեղում, № 38։

Մռավյանի և Կարինյանի հողվածներում լսվում է լենինյան մտքերի արձագանքը ոչ թե «վերին տասը հազարի», այլ կյանքի ծաղիկը կազմողների՝ աշխատավոր մարդկության համար գրականություն ստեղծելու և Գորկու կողմից այդ խնդիրը փայլուն կերպով կատարելու մասին: «Հեքիաթների» գրված խավոր հերոսը, — նա, — որը իր հարուստ կյանքով և բոլոր ձգտումներով լցնում է իրականությունը հեքիաթային մոտիվներով, — ժողովուրդն է, աշխատող և մտածող ժողովուրդը: Նրա մասին է միայն խոսում Գորկին», — գրում է Կարինյանը³⁷:

Ինչպես և Ստ. Շահումյանը, Կարինյանը ևս չի անցնում Գորկու որոշ ստեղծագործությունների, տվյալ դեպքում «Հեքիաթների» «մի քանի վրիպելի կողմերի» կողքից, որոնք արտահայտվում են նրանում, որ «Գորկին մերթ ընդ մերթ առաջադրում է նորից ուրույն իր այն մտածությունները, որոնց ցայտուն խտացումը տվել է նաև «Исповедь» պատմվածքի մեջ»: Այդ վրիպումները Կարինյանը բնորոշում է որպես «քարոզական-իդեալիստական տարրեր»:

Գորկին իր «Խոստովանություն» վիպակի հերոսի ճանապարհը համարում էր զարգացում՝ «անհատապաշտությունից դեպի կոլեկտիվիստական աշխարհըմբռնում»: Բայց «կոլեկտիվիստական աշխարհըմբռնումը» հասկացվում էր որպես մի յուրահատուկ տեսակի աստվածաշինարարություն: Թեև դա կապվում էր ժողովրդի կողմից «իր ուժը գիտակցելու», մարդկանց հոգիները խավարի և նախապաշարումների գերությունից՝ ազատելու հետ, այսինքն զուրկ չէր աթեիստական տրամադրությունից, բայց աստվածաշինարարության գաղափարը, որպես ժողովրդին «մեծ գործի համար ի մի ձուլելու» պայման՝ հետևողականորեն անցնում էր Գորկու վիպակով:

Այս գաղափարը լենինը համեմատում էր «բոգոմանության իդեալիզմի» հետ, համարում էր Գորկու հրապարակախոսական հողվածներում արտահայտված «աստվածաշինարարական» մտքերի արձագանքը, մտքեր, որոնք ծնունդ էին առել ռեակցիայի տարիներին մարքսիզմից հեռացած մի շարք նախկին սոցիալ-դեմոկրատների «աստվածաորոնման և աստվածաշինարարական» գաղափարներից: 1913 թ. լենինը Գորկուն գրում էր, որ աստվածաորոնումը տարբերվում է աստվածաշինարարությունից այնքան, որքան «դեղին սատանան» տարբերվում է կապույտ սատանայից: Եթե աստվածաշինարարության մասին խոսվում է ոչ թե նրա համար, որպեսզի արտահայտվեն «բոլոր սատանաների դեմ», այլ նրա համար, որ նախապատվություն տան կապույտ սատանային՝ դեղինի հանդեպ, — «դա հարյուր անգամ վատ է, քան բոլորովին չխոսելը»³⁸:

«Խոստովանություն» վիպակի մասին լենինի այս մտքերն էին, որ արձագանք էին գտել Ատ. Շահումյանի և Ա. Կարինյանի հողվածներում:

Լենինյան հայացքների ոգով հայ գրաքննադատները պաշտպանեցին Գորկուն բուրժուական քննադատության շարամիտ հարձակումներից, մեկնաբանեցին նրա ստեղծագործությունը որպես համաշխարհային արժեքի ստեղծագործություն և ցույց տվեցին Գորկու՝ որպես գեղարվեստագետի և հասարակական գործչի վիթխարի դերը բանվոր դասակարգի պայքարում: Այսպիսի մեկնաբան-

³⁷ Նույն տեղում:

³⁸ В. И. Ленин, Сочинения, издание 4-е, т. 35, стр. 89.

նության շնորհիվ Գորկին դարձավ Անդրկովկասի, այդ թվում հայ աշխատավորության ամենասիրելի գրողներից մեկը:

Գորկու նկատմամբ դիրքորոշումը ապացույցներից մեկն էլ այն իրողության, որ նախահեղափոխական շրջանում հայ գրաքննադատությունը յուրացնում էր և առաջնորդվում այն գեղագիտական սկզբունքներով, որ զարգացնում էր լենինը՝ նոր, սոցիալիստական գրականության ստեղծելու համար:

ОТРАЖЕНИЕ ЛЕНИНСКОЙ ОЦЕНКИ М. ГОРЬКОГО В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРНОЙ КРИТИКЕ

З. О. ГУКАСЯН

Р е з ю м е

В. И. Ленин всегда подчеркивал благотворное влияние художественного творчества Горького на революционное движение России и неразрывную связь писателя с социал-демократической партией. Привлекая Горького к сотрудничеству в большевистской печати, Ленин отмечал и исправлял некоторые идейные его ошибки. В период реакции, когда буржуазная критика преднамеренно шумела о «конце Горького», как художника, Ленин защищал его, характеризуя как «величайшего представителя пролетарского искусства», и опровергал распространенную клевету о его исключении из социал-демократической партии.

В защиту Максима Горького выступали армянские прогрессивные культурные деятели и революционеры-литераторы Александр Вермишев, Владислав Каспарянц и др. Со специальной статьей «О Горьком» выступил Степан Шаумян, где отметил значение творчества Горького как пролетарского писателя и высмеял «пророчество» его закавказских критиков — буржуазных эстетов.

В 1916 году на страницах газеты «Пайкар» в духе ленинских выступлений о творчестве Горького писали Ст. Шаумян, большевики-литераторы А. Мравян, А. Каринян и другие.